Հավելված

ՀՀ կառավարության 2009թվականի
............................ ............-ի,,
N ...........Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՀՈՒՆՋ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱ



* Ծանոթագրություն

① Էներգետիկայի, կապի, տրանսպորտի.... 0.2 հա /գյուղ. նշ. հողերից/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ
ՀԻՄՆԱԴՐԱՄ - ՀԱՅԱՍՏԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
**MILLENNIUM CHALLENGE
ACCOUNT - ARMENIA**
STATE NON-COMMERCIAL ORGANIZATION

ՀՄՀ - 2040

07 մայիսի 2009թ.

ՀՀ տարածքային կառավարման
նախարարի առաջին տեղակալ
պարոն Վաչե Տերտերյանին

Հարգելի պարոն Տերտերյան,

Ի պատասխան Ձեր 05.05.2009թ. թիվ 03/16/2477-09 գրության հայտնում եմ, որ «ՀՀ Սյունիքի մարզի Քարահունջ գյուղական համայնքի հողերի կատեգորիան փոխելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ՀՄՀ-Հայաստան ծրագրի Ոռոգվող Գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում վերոհիշյալ համայնքում շինարարական աշխատանքների իրականացում չի նախատեսվում:

Հարգանքով՝

Գլխավոր գործադիր տնօրեն՝ Արա Հովսեփյան

*Կատարող՝*
*Ա. Սարգսյան*
*Հեռ՝ (010) 547-988, (093) 000-315*

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
ՄՈՒՏՔ ԹԻՎ 08/4615-09
«08» 05 2009թ.

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0010, Մելիք Ադամյան փող. 2/1
2/1 Melik Adamyan Str., 0010 Yerevan, Republic of Armenia
Հեռ.՝/ Tel.: (374 10) 547988, 546819, ֆաքս՝/ fax: (374 10) 547986

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ վարչապետի 13.08.08թ. N599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի

Հանձնաժողովը 2009 թվականի հունվարի 20-ի նիստում քննարկելով ՀՀ Սյունիքի մարզի Քարահունջի համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեման, առաջարկում է այն ներկայացնել Հայաստանի Հանրապետության իրավասու նախարարությունների և գերատեսչությունների հաստատմանը:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Տերտերյան

քարտուղար՝ Ֆ.Եգորյան

անդամներ՝ Ռ.Ալավերդյան

Ս.Պապյան

Ս.Գալստյան

Գ.Գյուրջյան

Լ.Շահվերդյան

~~Վ. Դանիելյան~~

Ֆ.Բաշոյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

3304, ՀՀ Սյունիքի մարզ, ք.Կապան, Նժդեհի 1, հեռ. ֆաքս 28-78-30, (0285 ) 5-20-10

«25» նոյեմբերի 2008 թ. № 12-3111

Ձեր ______________ № ______

Յողերի օգտագործման ժամանակավոր
սխեմաների համաձայնեցման
միջգերատեսչական հանձնաժողովի
նախագահ Վ. Տերտերյանին

Յարգելի պարոն Տերտերյան

ՅՅ կառավարության քննարկմանը ներկայացնելու նպատակով Ձեզ է ներկայացվում Սյունիքի մարզի Քարահունջ գյուղական համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությունը /կցվում է/, ըստ որի նախատեսվում է համայնքի վարչական սահմաններում գտնվող, գյուղատնտեսական նշանակության հողերից 0.243 հա, այդ թվում մասնավոր սեփականություն հանդիսացող՝ 0.043 հա այգի, համայնքային սեփականություն հանդիսացող՝ 0.2 հեկտար այլ հողատեսքեր /անօգտագործելի/ փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ փոքր հզորության հիդրոէլեկտրակայանի և օժանդակ կառույցների շինարարության նպատակով :

Ս. Խաչատրյան

Կատ.
Ս. Կոստանդյան
հեռ.(0285) 65206

# Քաղվածք

ՀՀ Սյունիքի մարզի Քարահունջ գյուղական համայնքի ավագանու
20.11.2008 թվականի նիստի արձանագրությունից

Լսեցին.- ՀՀ Սյունիքի մարզի Քարահունջ գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությունը ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնելու մասին.

/ Զեկ. Լ. Ավետյան /

Համայնքի ավագանին որոշում է.

1. Հավանություն տալ Սյունիքի մարզի Քարահունջ գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը /կցվում է/, ըստ որի նախատեսվում է գյուղատնտեսական նշանակության հողերից 0.243 հեկտար, այդ թվում մասնավոր սեփականություն համարվող 0.043 հա այգի, համայնքային սեփականություն հանդիսացող 0.2 հա այլ հողեր /անօգտագործելի/՝ փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ փոքր հզորության հիդրոէլեկտրակայանի և օժանդակ կառույցների շինարարության նպատակով օտարելու համար:
2. Խնդրել ՀՀ Սյունիքի մարզպետին՝ Քարահունջ գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությունը ներկայացնելու ՀՀ կառավարության հաստատմանը:

Համայնքի ղեկավար Լ. Ավետյան

իսկականի հետ ճիշտ է

Ա ր ձ ա ն ա գ ր ու թ յ ու ն

Սյունիքի մարզի համայնքների վարչական տարածքների և նրանցից դուրս գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման մարզային հանձնաժողովի 2008թ. նոյեմբերի 25-ի N 14 նիստի

Լսեցին- I. Սյունիքի մարզի Քարահունջ գյուղական համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությունը քննարկելու մասին.

/Զեկ. Ս. Կոստանդյան /

հանձնաժողովը որոշում է.

Յավանություն տալ Սյունիքի մարզի Քարահունջ գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է համայնքի վարչական տարածքում գտնվող, գյուղատնտեսական նշանակության հողերից 0.243 հեկտար, այդ թվում մասնավոր սեփականություն հանդիսացող 0.043 հա այգի, համայնքային սեփականություն համարվող 0.2 հա այլ հողեր /անօգտագործելի/ փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ փոքր հիդրոէլեկտրակայանի և օժանդակ կառույցների շինարարության նպատակով օտարելու համար:

Ս. Խաչատրյան հանձնաժողովի նախագահ, ՅՅ Սյունիքի մարզպետ

հանձնաժողովի անդամներ՝

Ս. Կոստանդյան մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ

Ռ. Խաչատրյան մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Ա. Ալտաբաշյան մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ

Լ.Պետրոսյան ՅՅ բնապահպանության նախարարության աշխատակազմի հանրապետական բնապահպանական պետական տեսչության Սյունիքի տարածքային բնապահպանական բաժնի պետ /համաձայնությամբ/

Ա. Գրիգորյան ՅՅ բնապահպանության նախարարության աշխատակազմի ՋՌԿԳ-ի Յարավային ջրավազանային տարածքային կառավարման բաժնի պետ /համաձայնությամբ/

Լ. Ներսիսյան ՅՅ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության Սյունիքի տարածքային բաժնի պետ /համաձայնությամբ/

Վ. Ծատրյան ՅՅ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության Սյունիքի և Վայոց Ձորի տարածքային բաժնի պետ /համաձայնությամբ/

Ս. Յովհաննիսյան ՅՅ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Գորիսի ստորաբաժանման ղեկավար /համաձայնությամբ/

# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

## ՀՀ Սյունիքի մարզի Քարահունջ գյուղական համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայի կազման մասին

Կազմված սխեմայում

բ/ էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի շարքը դասվող հողերը նշվել են նշանով՝ կարմիր շրջագծով:

Կազմված սխեմայով նախատեսվում է համայնքի վարչական տարածքում գտնվող, գյուղատնտեսական նշանակության հողերից 0.243 հա, որից մասնավոր սեփականություն հանդիսացող 0.043 հա այգի, համայնքային սեփականություն հանդիսացող 0.2 հա այլ հողեր /անօգտագործելի/ փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ փոքր հզորության հիդրոէլեկտրակայանի և օժանդակ կառույցների շինարարության համար.

ՓՀԷԿ-ի գլխամասային հանգույցը /երկարությունը՝ 30 մ, բարձրությունը՝ 4մ, ծավալը՝ 1500 խմ./ և ՓՀԷԿ-ի շենքը գտնվելու է «Վարարակն» գետակի ափին, օգտագործվելու է գետի անկումը 980 նիշից մինչև 825 նիշը: ՓՀԷԿ-ի հզորությունը լինելու է 0.7-0.8 ՄՎՏ, ճնշումային խողովակաշարի երկարությունը՝ 2375 գծմ, ունենալու է մեկ հատ ագրեգատ, 140 մ հաշվարկային ճնշում:

Քարահունջի
համայնքի ղեկավար

Լ. Ավետյան

# ՀՀ Սյունիքի մարզի
# Քարահունջ գյուղական համայնքի
# հողերի օգտագործման ժամանակավոր սխեմա

մ 1: 10 000




0,043 հա

[illegible]»



Հատուկ կարծիք

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն չի համաձայնեցնում Քարահունջի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայով նպատակային նշանակության 0.043 հա-ի փոփոխությունը, քանի որ առաջարկվող հողատարածքի վրա արդեն իսկ առկա է ինքնակամ կառույց:

Գ. [signature]

| ...ԱՅՍՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ |
| --- |
| ...ողատնտեսական գործունեության համար ___ հա |
| ...նակելի կառուցապատման համար — հա |
| ...սարակական կառուցապատման համար — հա |
| ...նդուստրիայի, ընդերքօգտագործման, կապի, ...ենթակառուցվ. օբյեկտների համար 0,2 հա |
| Արդյունաբերության, ընդերքի օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների համար — հա |
| ...ատուկ պահպանվող տարածքների համար — հա |

| | |
| --- | --- |
| ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե 27 04 2009 թ. № |
| ՀՀ պաշտպանության նախարարություն | ՀՀ պատմ. և մշակ. հուշարձ. պահպ. վարչություն 01.04.09թ. |
| ՀՀ գյուղ. նախարարություն 12.03.09 | ՀՀ Սյունիքի մարզպետ 2008թ. |
| ՀՀ ... նախարարություն | Քարահունջ գյուղական համայնքի ղեկավար |
| ՀՀ Էներգետիկայի ... պաշարների նախարարություն Էներգետիկայի ... մասնաճյուղի ... դեպքում անհրաժեշտ ... տարածքի սերվիտուտի ... Լ. Շահվերդյան | |



## Կարծիք

ՀՀ բնապահպանության նախարարությունը համաձայնեցնում է ՀՀ Սյունիքի մարզի Քարահունջ համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայով առաջարկվող փոփոխություններից միայն 0,2 հա հողամասը (էներգետիկայի, կապի… հողերի կատեգորիա) հետևյալ պայմանով.

- ապահովել գետի էկոլոգիական թողքի չափը և ձկնապաշտպան կառույցների համար անհրաժեշտ սպասարկման գոտին
- անհրաժեշտ ջրառի տեղը, չափաքանակները և ջրօգտագործման պայմանները կհստակեցվեն ջրօգտագործման թույլտվության հայտի գնահատման փուլում



5
ԳՅՈՒՂԱՄԵՐՁ «ԱԼԱԼԱՔԱՐ»
Տ-12-ՐԴԴ 11.0 հա
0.1 հա
5